



## ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ Հովիւ՝ Վեր. Տիգրան Ծանլեան

### ՎԱՐԴԱՆԱՆՔ

*«Բարի պատերազմը պատերազմեցայ, ընթացքը կատարեցի, հաստքը պահեցի: Ասկէ ետեւ կայ ու կը մնայ ինձի արդարութեան պասկը, ոչ թէ միայն ինձի, հասպա այն ամէնուն ալ՝ որ անոր յայտնուիլը սիրեցին»:* Բ. Տիմ. 4:7-8

**Յ** իշատակելի այս օրերուն, յետադարձ ակնարկ մը նետենք Վարդանանց պատերազմին վրայ:

#### 1. Վարդանանց պատերազմը խորհրդանիշն է Հայ ժողովուրդի դարատր գոյութեան:

Գոյութեան պայքարը բնական, ընդհանուր եւ հասարակաց երեւոյթ մըն է: Դարերէ ի վեր մարդը գոյութեան պայքար կը մղէ եւ կը կոռի վարակիչ ախտերու եւ աղէտներու, ներքին եւ արտաքին թշնամիներու դէմ: Ժողովուրդներ եւս անհատներու նման կը մարտնչին եւ կը ջանան անարատ պահել իրենց ազգային դիմագիծը եւ ցեղային մասնաշատկութիւնները:

Մեր պատմութեան հին ու նոր շրջաններուն մեր մղած հերոսամարտերը յաւէտ կը ձգտին յաւերժացնելու համար մեր ժողովուրդին արդար գոյութիւնը: Աւարայրի ճակատամարտը խորհրդանիշն է մեր ժողովուրդի ապրելու եւ գոյատեւելու աննկուն կամքին եւ կորովին: Սրբազան այս պայքարին հոս կազմեցին զանազան դասակարգեր, եկեղեցական, նախարար, հայրենասէր մտատրական, երիտասարդներ ու տիկիներ: Կոռուցան գրահով ու զէնքով, հոգիով եւ հաստքով, կոռուցան աղօթքով եւ խաչն ու Աւետարանը բարձրացնելով:

#### 2. Վարդանանցը Խորհրդանիշն է Հայ ժողովուրդի հարազատ հայութեան:

Հազարաւոր տարիներէ ի վեր պահեցինք մեր հայութիւնը եւ տակաւին կը պահենք մեր ազգային շունչը եւ հոգին: Պարթեւներ ու Պարսիկներ, Սելճուքներ եւ Մոնկոլներ, Թուրքեր ու Թաթարներ սպառնացին եւ տակաւին կը սպառնան մեր գոյութեան եւ հայկականութեան: Սակայն նախատիքներ եւ սպառնալիքներ չկրցան մեզ զատել ու զրկել մեր

սիրած հայությունն:

Ի նշան երախտագիտության նախիջեանի հայերը փորագրել տուին հայերէն գրութիւն մը Կատարինէ Բ.ի արձանին վրայ: Սակայն Ռուսիոյ ձարը տեսաւ եւ առարկեց ըսելով – «Կատարինէ Բ.ի արձանը յաիտեան պիտի մնայ, բայց հայութիւնը մնայուն չէ»: Հայեր ստիպուեցան ջնջել հայատառ այդ գրութիւնը. սակայն յեղափոխութեան ժամանակ արձանը ձուլարան հասաւ: Այսօր հայեր տակաւին կան ու կը պահեն իրենց հայութիւնը հայրենիքի եւ սփիւրքի մէջ:

Պահենք մեր հայութիւնը, մնանք Լուսաւորիչի թոռնիկները, խօսինք ու կարդանք պերճաբարբառ մեր լեզուով:

### **3. Վարդանանցը խորհրդանիշն է մեր հարուստ ժառանգութեան:**

Մենք կը պարծենանք թէ հայերս եղած ենք աշխարհի առաջին ժողովուրդը որ ընդունած է Քրիստոնէութիւնը, որպէս պետական կրօն: Նաեւ կը պարծենանք թէ Նոյեան տապանը հանգչած է Արարատի վրայ: Անշուշտ կը պարծենանք թէ Աստուածաշունչի թարգմանութիւնը կոչուած է «Թագուհի Թարգմանութեանց»: Տուած ենք աշխարհի տարբեր մարզերէ ներս հսկաներ: Նարեկացիի նման սուրբ չկայ: Նարեկի պէս գիրք չկայ: Արարատի նման գազաթ չկայ:

### **4. Վարդանանցը վերաշինելու բարձր կարողութեան խորհրդանիշն է:**

Փոթորիկներ կը պատահին ու նաեւ կ'ընկղմին: Հրդեհներ անտառներ կ'այրեն ու կը մերկացնեն: Երկրաշարժեր գիւղեր ու քաղաքներ ատերակ կը դարձնեն: Նոյնպէս ալ կրակն ու կարկուտը, կոտորածն ու կողոպուտը, բռնագաղթն ու արտագաղթը բազմաթիւ անգամներ անխնայ հարուածեցին «մեր աշխարհը» ու «մեր ժողովուրդը»: Բայց այս բոլորը չկրցան պարտութեան մատնել մեր հրաշք ժողովուրդը:

Մենք պիտի չմեռնինք, այլ պիտի ապրինք: Մենք պիտի երգենք ու Աստուծոյ մեծահրաշ գործերը պիտի պատմենք: Մեր կոչումը երկնային է, ու անոր պիտի ծառայենք:

Ինչպէս մեր նախահայրերը, մենք ալ այսօր բարի պատերազմը պատերազմինք եւ հաւատքը պահենք:

---

## **ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԻ ՀԵՏԵԻԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ**

- Կիրակի** - Առաւօտեան 11-ին Պաշտամունք  
Մանուկներու Կիրակնօրեայ
- Երեքշաբթի** - Երեկոյեան 7-ին Սերտողութիւն
- Հինգշաբթի** - 7-ին Երիտասարդաց Սերտողութիւն  
8:30-ին Երգչախումբի Փորձ
- Ուրբաթ** - Առաւօտեան 10-ին Քոյրերու Ժողով  
7-ին Պատանեաց
- Ծաբաթ** - Ամէն Ամսուայ Վերջին Ծաբաթը Երեկոյեան  
7-ին Երիտասարդ Ջոյգերու Ժողով

# ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՏԵՐՈՋ ՓԱՌՔԻՆ ՀԱՄԱՐ

- Յունուարի առաջին Կիրակին կը զուգադիպեր Հավակյան Ծնունդի: Այդ առթիւ ծրագրուած էր միացեալ պաշտամունք մը, Կիլիկիա Հայ Աւետարանական Եկեղեցաշէնքէն Անր: Հո՞ծ բազմութիւն մը կար, պատգամները օրհնաբեր էին:
- Յունուար 13-ին, Աւետարանչականի վարիչ քարտուղարը, Վեր. Ժիրայր Սողոմեան մեզի հետ էր իր պիրատուն կողակիցին հետ: Վերապատուելին նախ տեղեկութիւններ փոխանցեց կազմակերպութեան աշխատանքներուն մասին, ապա սիրոյ մասին օրհնեալ պատգամ մը տուաւ: Այս առթիւ եղան նուիրատուութիւններ: Այօթե՛նք Աւետարանչականի ծառայութիւններուն մասին ու պատրաստ ըլլանք օգնել:
- Մեր եղբայրներէն՝ Արայիկ պիտի սկսի դասավանդել հոգեւոր աճի եւ Աւետարանչութեան մասին: Աստուած օրհնէ մեր եղբայրը: Նուիրումով ներկայ ըլլանք, մասնակցինք, օրհնուինք եւ սորվինք: Երիտասարդ եղբայրներ ու քոյրեր Փետրուար 14-էն սկսեալ ժամը 7-ին ամէն Հինգշաբթի ժամադրութիւն ունինք:
- Տէրը կամի Փետրուարի երրորդ Կիրակին կը ծրագրենք ունենալ յիշատակի պաշտամունք մը, ԳԷւորգ եղբայր Թօփճեանի յիշատակին:
- Փետրուարի 4րդ Կիրակին պիտի ունենանք անդամական ժողով: Բոլոր եկեղեցապատկան ժողովներ, կազմակերպութիւններ իրենց կատարածները ներկայացնելու են, ունենալով նաեւ ապագայ ծրագիրներ: Ժողովը ստաստեան պաշտամունքէն անմիջապէս ետք պիտի ըլլայ:
- Եութայի Արարատ Աւետարանական եկեղեցին կը շարունակէ իր պաշտամունքներն ու ծառայութիւնները: Այս օրերուն կը ճիւրղակալեն հալորդիներ որոնք Զմեռնային Ողոմսիական խաղերուն համար Սոյթ Լէզ Սիթի կը գտնուին: Աստուած օրհնէ զիրենք:
- ՊԷւրք է հիմնակուրնէ պատրաստուիլ տարեկան համագումարին, որ տեղի պիտի ունենայ Նոյեմբեր 15-17 Բայն Քրէտի մէջ: Պատգամաբեր, Վեր. Հասիպ Ալաճաճին պիտի ըլլայ: Դուն կրնաս պատրաստուիլ արձանագրուելով եւ վճարելով կանխավճարը: Օճ ի գործ:
- Յունուար 16-ին մեծ ցնցումի ենթարկուեցաւ մեր եկեղեցին, երբ ձեռնադեպ երեցներէն՝ ԳԷւորգ եղբայր Թօփճեան երկնագնաց եղաւ 73 տարեկանին: Պարապութիւն մը ստեղծուեցաւ, վստահաբար պարապութիւն մը ստեղծուեցաւ նաեւ տան մէջ. Իւղաբեր քոյր կորսնցուց իր ընկերը, աղօթակիցն ու ընկերակիցը: Մեր եկեղեցիին ցաւակցութիւնները ընտանիքին, աղօթենք որ ամենակարող Աստուած Սուրբ Հոգիով մխիթարէ ընտանեկան պարագաները, Թօփճեան շատախղները եւ նոր «ԳԷւորգ եղբայրներ» հանէ իր թագաւորութեան մէջ ծառայելու համար:

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

- ◆ *Պզտիկ հաաստըը հոգիդ երկինք կը հասցնէ, իսկ մեծ հաաստըը երկինքը հոգիիդ մէջ կը բերէ:*
- ◆ *Հաաստըը աստիճաններէ կը բարձրանայ որ սէրը պատրաստած է, ու կը նայի պատուհաններէ որ յուրը բացած է:*
- ◆ *Հաաստըը ինքնին բան մը չ'ընէր, այլ ամէն բան Աստուծոյ համար, Աստուծոյ միջոցով եւ Աստուծոյ իշխանութեան տակ:*
- ◆ *Հաաստըը այն թելն է որ կը կապէ քեզ շնորհքին եւ որուն վրայէն շնորհքը, Աստուծմէ բխած, քեզի կը հասնի:*

# ՊԱՏԱՀԵՑ

Թկ-թկալով ժամանակը ցնցեց  
Ցերեկվա լուսը կարծես շուտ մարեց  
Մութը գնալով ավելի պնդեց  
Գիշեր - խավարին լուսինը հսկեց  
Այս դեպքն իրական կյանքում պատահեց  
Տխուր մարդը լրջորեն խորհեց:

Ինչո՞ւ ինչո՞ւ այսպես եղավ  
Իմ ուզածներս երբեք չեղավ  
Եթե Աստված կա երկնքում  
Ինչո՞ւ բախտս չբերեց կյանքում:

Ու աչքը հանկարծ աստղին է նայում  
Ինչո՞ւ է աստղը մութի մեջ փայլում  
Ինչո՞ւ է մութը հետո չքանում  
Ինչո՞ւ լուսինը երբեք չի հանգչում  
Տիեզերքն արդյոք ո՞վ է հնարել  
Ո՞վ է ստեղծիչը: Ո՞վ դրեց հիմքը  
Ո՞վ է ղեկավարն: Ի՞նչ է նպատակն  
Այսպես նա մտքով հասավ Արարչին  
Ու հանկարծ սիրտը սքանչացավ, հրճվեց  
Իսկ խավար միտքը լուսով պասկվեց:  
Տխուրը փոխվեց: Խավարը ցրվեց  
Արեւը փայլեց ու ջուրը հոսեց  
Օդի մեջ մեղմիվ Սուրբ Զայնը կանչեց  
Սքանչացած մարդը վա՛ր արցազանքեց  
Ու շուրջ բոլորին շտապով վկայեց  
Այս բանը կյանքում ինձի պատահեց:

Նարինե Սագիսյան  
Երեւան

---

## Armenian Evangelical Brethren Church

3200 London St., Los Angeles, CA 90026

(213) 483-7265 / Fax (213) 483-7002

Internet: [www.aebcm.org](http://www.aebcm.org) – E-mail: [aebcministries@aol.com](mailto:aebcministries@aol.com)